
1ռ.
ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ
Նամակներ
մենության
հեռուներից



Արթուր Արմին /Բաբայան/

Մատիտանկար՝ Արմեն Բաբայանի, 1988թ., Երեւան

ԳՄԴ 84Հ7—5
Բ 123

Գիրքը հրատարակվել է
հեղինակի միջոցներով

Գրքի վաճառքից ստացված ամբողջ հասույթը հեղինակը փոխանցում է աղետի գոտու ծնողազուրկ երեխաներին օգնելու նպատակով ստեղծված «Հայաստանի երեխաներ» հիմնադրամին:

Բաբայան Ա. Լ.
Բ 123 Նամակներ մենության հեռուներից: Բանաստեղծություններ (Արթուր Բաբայան.— Եր.: Արևիկ, 1989.— 72 էջ.

«Նամակներ մենության հեռուներից» գրքույկի հեղինակը իր ապրած կյանքի լույսի և ստվերի բնության անողոք ճամփաբաժնում խորհում է մեր իրականության, ճշմարտության և կեղծիքի մասին:

Բ $\frac{4808080201}{707\ (01)\ 88}$ ԳՄԴ 84Հ7—5

ISBN 5—8077—0369—3

© Արթուր Լևոնի Բաբայան

ԱՐԹՈՒՐ ԲԱԲԱՅԱՆ

Նամակներ մենության հեռուներից

ԵՐԵՎԱՆ «ԱՐԵՎԻԿ»
1989

Բովանդակություն

Տակառի թշշոցը

Ես փնտրում եմ 4
Օրը 5
Քաղաքը 6
Միամտություն 8
Խաղ 9
Անորոշություն 10
Անպատասխան սեր 11
Սե՞ր 12
Բանտ 14
Անհաշտություն 16
Երջանկություն 17
Կանգնած եմ կարծես... . . . 18
Գույնը ժամանակի... . . . 19
Ու հոգիս... 20
Տակառի թշշոցը 21
Ազատագրվել 30
Եթե նկարիչ լինեի 31
Աթիլա 33
Նազովրեցին 37
Բառեր... բառեր... . 38
Փնտրում 39
Խումհար 40
Իկար 45
Վերջին գիշերը 46
Սպասիր, երազ իմ... . . . 47

Միայնության մեր հրապարակում

Միայնության հրապարակում . 52
Փոքր Մեր 53
Երկխոսություն 54
Բազմաձայնության նվագախումբը 57
Մի բռնաբարեք 58
Եկեղեցու գմբեթ... . . . 59
Ասպետը 60
Կանչ տագնապի 61
Սկիզբ 65

Միայնության մեր հրապարակում

Բանաստեղծություններ որոնք չեն մտել «Բնազանցություն» գրքի մեջ

ՄԻԱՅՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Արևն է թեքել իր մեծ գլուխը՝ մեռնող գլադիատորի պես,
Տաք կտուրներից դեռ շեկ արյուն է դանդաղ կաթկթում,
Բողոքի տոթ՝ խզված կոկորդներում՝ հազարավորներ հրապարակում,
Ու դեպի վեր ցցված բռունցքների անտառ՝ միասնության
մերձությունը փնտրող:

Պղնձե սափոր, որ վաղո՞ւց արդեն շեփոր է կոչվում,
Ու պարզ մեղեդի հոգիներ հուզող միայնության այս հրապարակում.
Այստեղ ուշացած արդարությունն է փորձում ծնվել,
Իսկ հորիզոնում՝ խրտնոտած ուրվական անցյալից՝ շեղ աչքեր
ու ծռված քեղ:

1988թ., Երևան

ԲԱԶՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ

Ցնորաբեր ձայն՝ օրերի անթիվ դիզակույտերից.
Ու արևը՝ որպես դեղի՞ն ու դեղի՞ն մեծ ճշմարտություն՝
Անձրևապոսերում փշրված է այն, փորձի՛ր հավաքել:
Գազանանոցային ազա՞տ երգչախումբ՝ նե՛ղ վանդակներում,
Իսկ պարտերներում հին ներկայացում՝ հնազանդության ցույց:
Աչքի՛, ականջի՛ իրար հակասող մեծ լրատվություն,
Փոսերից ելած մեռելների խումբ՝ հոգեհանգստի արարողություն,
Ու մի ջղուտ ձեռք ետևի կողմից՝ դիրիժորի փայտիկը բռնած:
Զարդված թավջութակ՝ նոր աղեղնալարով, բազմաձայնության փորձ
Ու վերածնված կես արդարություն՝ մարդու ստվերի պես կողքից
քարշ եկող:

1988թ., Երևան

Ա Ս Պ Ե Տ Ը

Բարի, զարմացած հայացքը հառած աշխարհին այս խոլ,
Հենած իր նիհար պառավ նժույգին, երկար նիզակը միշտ
աջում բռնած,
Տեր Դոն Կիխոտը՝ կաստիլիացի մի տխուր ասպետ, մի
երազող խենթ,
Շրջում է ահա հարյուրամյակներ քանի՜ ու քանի՜՝
ճշմարտությունը գտնելու հույսով:
Աշխարհ ահագի՜ն, տիեզերքն անծի՛ր, հանելուկն՝ ասես
հանելուկի մե՛ջ,
Իսկ նա կարծես՝ հե՜չ, իր ուղին բռնած, հավատացյալի
միամտությամբ,
Նվիրված իր վեհ ցնորված մտքին, ծաղրողների բութ
հայացքների տակ,
Քշում է իր ձին, թափառում անվերջ, ճշմարտությունը
գտնելու հույսով:

1981թ., Եռեւան, մեկուսարան

Կ Ա Ն Չ Տ Ա Գ Ն Ա Պ Ի

Ունկերն իմ զգայուն պատմարան— կաղնու սոսափն են որսում,
Անոր-անտերունչ մաշված խեւ քամին դառն երգ է սոսում,
ականջիս ասում,
Ստվերներն են սահում մութ ու անմեկին՝ լուռ խոկումների
անուրջներ հրմա,
Ու էն հին քամին հանդարտ թերթում է մագաղաթները՝ տերևքը նրա:
Խուլ հեքը կաղնու՝ բյուր տարիների անցածն է պատմում,
Դեղին ու նրբին նոր գալարներ են խշշում, բաց-բացվում ու
ինձ տագնապում...
Դու լուռ ունկնդիր անձկության խորքին, անցան ժամերը
քար սպասումների,
Մենք նորի՛ց կանգնած անցման խոտորին, առջևում՝
անհա՛յտ-անիմանալի:
Հույսեր եմ տեսնում նոր ու անսովոր, շեմքին նոր դարի՝
լույսեր առկայծող,
Բայց նա էլ՝ երկսեռ քերովբե անսքող, ունի և երես դժնի՛,
կործանո՛ղ:
Ու երազներով գալիք մի հյուսիր ու մի հավատա հեքիաթի
լույսին,
Մենք նորի՛ց կանգնած անցման խոտորին, առջևում՝ անհա՛յտ,
անիմանալի՛...

Ու ահա դարձած ահազանգ ձայնող լեզվակ մեծ զանգի,
Կամ թե պղինձը նրա մսերի՝ կականն հարակոչ,
Ես ջե՛րմն եմ, վա՛խը՝ լույս-մոմը բռնած ձեր խենթ մատների՝
Որ անվերջի մեջ ճամփան է ցուցում գալիք-անհայտի:

Ես կա՞նչն եմ տագնապ, որ պիտի դաղեմ ցավի պես խոցող,
Ես աղերսողն եմ Եղիայի նման, բարբառեմ պիտի...

— Բա՛ց ականջդ, լսի՛ր, լսի՛ր.
Իմ տողերից մի թթվեցրու դեմքը քո,
Ու մի դարձրու արատներից քո երեսը,
Բա՛ց ականջդ, լսի՛ր, լսի՛ր.—
Սև ոսոխ է շատ ավելի, հին թշնամին մե՛ր միջի:

Թշնամի է, դու հավատա՛,
Ուրիշ կոչնակ ես չգտա՞.
Ուրիշ ինչպե՞ս կոչեմ, ասա՛.—
Միավորի ու անհատի քո բռնության սև խզումը,
Անմիաբան ու անիշխան քո բնույթը,
Ամեն գնով դիրք-աթոռի քո մոլուցքը,
Ունենալու, ո՛չ լինելու քո ձգտումը,
Ամեն մեկիս միջի նստած այն որդուկը, որն հուշո՞ւմ է՝
Իմը՝ ի՛մն է, իսկ Մերն՝ ինչի՞ս...

Բա՛ց աչքերդ, ունկդ դեմ տուր,
Դու ինձ լսիր, լսի՛ր, լսի՛ր:
Ժամանակի խառնիխուռն հոլովույթում
Ավելի շատ դու կորցրել ես, քան թե գտել,
Չի չե՞ս զորել եղածն պահել,
Քանզի ո՞րդը ներսի՝ քեզ չի թողել,
Ո՞րդը ներսի, որ այսօր էլ իրեն համար ուռճանում է,
Ինչքան կերտես, կործանում է ու քանդում է որդը ներսի՝
Նույնքա՛ն ու ավելի:

Սթափվի՛ր, լսիր, լսի՛ր ու մի խոսիր.
Թե բարբառես, գիտեմ, էլի Մեծ անցյալդ պիտի հիշես,
Հազար-հազար տարիների քո խորքերից պիտի ցնծա՞ս,
Բառ ու բանի, մտքի՛, լույսի՛ անցածներից պիտի խոսես...
Եղո՞ւկ, եղո՞ւկ,
Դու անցյալիդ շքեղ դափնու մեծ պսակին քո՞ւն ես մտել,
Իսկ այսօրվա միավորման քո միտումը՝
Լոկ տարե՞րք է արդարացի պոռթկման պահին...
Իսկ մեզ պետք է... շա՛տ ավելին...

Բա՛ց աչքերդ.
Ձեռներեցի քո կերտվածքը մեր օրերում ո՞րդ է դարձել
(Արդյոք հնում նո՞ւյնն է եղել),
Խաչագողի քո մի ձեռքը խո՛ց է դարձել,
Որ բրում է սրբագույնը՝ Մե՛ր եղածը,
Իբր քիչ են մեր թշնամիք, դու քանդում ես քո՛ կերտածը:
Առ մնացյալն անկարեկից ու անտարբեր բնությունդ
Հենց մեզ համար դո՛ղ է դարձել:
Առավելս կորզել կյանքից՝ անհատական քո սկզբունքը ծուծք է դարձել:
Քո խորքային խոր հավատքն է ազատությո՞ւնն— անմիաբան...
. . . . . .
Ու հեն՝ այս է բուն պատճառը,
Որ դեռ չկա միավորող խորը միտքը, հավատամքը,
Այն թարմ լույսը համապարփակ՝ գաղափարը ընդհանուրի,
Որ տանում է նո՞ր հարթության ու հարության՝ ապագայի՞...
. . . . . .
. . . . . .
Դու հանճարեղ առեղծվածն ես այս աշխարհի մեծ պատմության,

Դու պատմության կանոններից վե՞ր ես, անկո՛ղմ, անհատակա՛ն,
Դու մի՛շտ շտապող, դեռ չտեսած հավատացյա՞լ անվերապահ:
Դու կորցրել ես հա՛ր ու անվե՛րջ ու չես կորել,
Բայց իմացիր, առավելս նորի՛ց կորցնել՝ էլ տեղ չունե՞ս...

Սթափվի՛ր, սթափվիր ու եկ խորհիր, դու զգո՞ւշ եղիր:
Սթափվի՛ր, փրկությունդ...
Դու պայթյունո՛վ պիտի երկնես՝
Նորից նոր Դավի՛թ ծնես կամ ավելի՛ն,
Կամ ավելին՝ Մաշտոցյան լո՛ւյս, Մաշտոցյան սե՛ր:
Դու պայթյունո՛վ պիտի երկնես ու երկունքո՛վ բեկես պիտի
Ուղեցույցը քո դառն բախտի...

1988թ., Երեւան

Գրական-գեղարվեստական հրատարակություն
ԱՐԹՈՒՐ ԼԵՎՈՆԻ ԲԱԲԱՅԱՆ
ՆԱՄԱԿՆԵՐ ՄԵՆՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՆԵՐԻՑ
Բանաստեղծություններ

Литературно-художественное издание
АРТУР ЛЕВОНОВИЧ БАБАЯН
ПИСЬМА ИЗ ДАЛИ ОДИНОЧЕСТВА
Стихи
(На армянском языке)
Издательство «Аревик»
Ереван, 1989

Խմբագիր՝ Դավիթ Հովհաննես
Նկարիչ՝ Ա. Ս. Քյուրքչյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Բ. Իսահակյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Վ. Հովհաննիսյան
Վերատուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սեդրակյան

ИБ № 459
Հանձնված է շարվածքի 23. 10. 1989 թ.: Ստորագրված է տպագրության 11 01. 90 թ.: ՎՖ 06402: Չափը՝ 60×70¹/₁₆: Թուղթ՝ տպագրական № 1: Տառատեսակ «Նորք»: Տպագրություն՝ բարձր, 3, 51 պայմ. տպ. մամ., 2, 28 հրատ. մամ.: Տպաքանակ 5000: Պատվեր՝ 2261: Գինը՝ 1 ռուբ.:
«Արևիկ» հրատարակչություն, 375009, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Аревик», 375009, Ереван-9, ул. Теряна, 91.
ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.